ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/174

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ նախագահի աշխատակազմ
Մասնակից՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ս. Թորոսյանի, Լ. Խոջոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» գնանշման հարցում, կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.07.2020թ.-ի թիվ ԱՂ-777-2020 գրության հիման վրա, 16.07.2020թ.-ին «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 16.07.2020թ.-ին:

17.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/174 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ նախագահի աշխատակազմը 10.07.2020թ.-ի թիվ ԱՂ-777-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթներից ելնելով՝ տրամադրվում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Բալոյան Եղբայրներ» և «Էլլիպս Ջիէյ» ՍՊ ընկերությունների տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 17.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ

26/26-1/10640-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 23.07.2020թ.-ին հրավիրված նիստին:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները նիստի ընթացքում բանավոր կերպով հայտնել են, որ կից ներկայացնում են Պատվիրատուի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված Ընկերության էլեկտրոնային փոստի հացեից կատարված արտատպումը, որից պարզ երևում է, թե ինչ փաստաթղթեր են կցվել և ներկայացվել վերջինիս: Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչները հայտնեցին, որ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից որևէ անգործություն չի դրսևորվել գնման գործընթացի հետագա մասնակցության հետ կապված:

4. <u>ՍՑ-LO-2020/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ նախագահի աշխատակազմի «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել գնային առաջարկի չափով

որակավորման ապահովում՝ կից ներկայացնելով «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ 1.1 հավելվածի համաձայն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.07.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը ներկայացվել է առցանց վճարման սևագիր (անավարտ գործարք) տարբերակը, այնինչ պետք է ներկայացվեր կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակը:

v. Նույն չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) նշված չէ թե «Рубеж» ընկերության որ արտադրանքն է առաջարկվում՝ RS-R1 թե՞ RS-R3 տեսակը, քանի որ RS-R1 տեսակը չի համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ առաջարկված լոաաձայնային ազդարարը հասցեական չէ, այնինչ պետք է առաջարկվեր և նշվեր RS-R3 տեսակը և հասցեական լոաաձայնային ազդարար:

vi. 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար մասնակիցը առաջարկել է «Пожтехника» ընկերության արտադրության МГПХ-150-40-33-ЭМ/Р և МГПХ-150-100-33-ЭМ/Р (Иней) համակարգեր և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) հրամարիչ նյութի անվանումը նշել է «3M TM Novec-1230 կամ համարժեք», սակայն հանձնաժողովը տեղեկացել է, որ նշված ընկերությունը օգտագործում է այլ հրամարիչ նյութ, որը համարժեք չէ հրավերով պահանջվող 3M TM Novec-1230 նյութին, բայց եթե այնուամենայնիվ առաջարկվող համակարգը լիցքավորվելու է 3M TM Novec-1230 նյութով կամ դրան համարժեք նյութով, ապա պետք է նշվի կոնկրետ նյութի անվանումը առանց «կամ համարժեք» բառերի:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.07.2020-ին Մասնակցին ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում:

ix. Հանձնաժողովի 03.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար:

x. Մասնակցի կողմից el@sec.am էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի համապատասխան hayk.khachatryan@president.am էլեկտրոնային փոստի հասցեին

02.07.2020թ.-ին ուղարկվել է շտկված թիվ 1.1 հավելվածը, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 22.06.2020թ.-ին տրված թիվ 430 վճարման հանձնարարականը և սերտիֆիկատը:

xi. Բողոքներ քննող անձի էլեկտրոնային փոստի հասցեին՝ hayk.khachatryan@president.am էլեկտրոնային փոստի հասցեից ստացված հաղորդագրության համաձայն՝ *«Առցանց հեռևել եմ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2020/174 ընթացակարգի քննության վերաբերյալ 23.07.2020թ.-ի ժամը 15:00-ին կայացած առաջին նիստին և, հաշվի առնելով «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացուցչի պնդումը, որ փաստաթղթերը ուղարկվել է իմ էլեկտրոնային փոստի հասցեին, դիմել եմ Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին՝ խնդրելով պարզել այդ հանգամանքը: Պարզվել է, որ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից 02.07.2020թ.-ի ժամը 16:53-ին նամակ է ուղարկվել hayk.khachatryan@president.am էլեկտրոնային հասցեին, որը սակայն սերվերի հակավիրուսային ծրագրի կողմից արգելափակվել է, իսկ կից ֆայլերը ջնջվել:»:*

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային

անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարված «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» գնանշման հարցման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը ներկայացվել է առցանց վճարման սևագիր (անավարտ գործարք) տարբերակը, այնինչ պետք է ներկայացվեր կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակը:
- Նույն չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) նշված չէ թե «Рубеж» ընկերության որ արտադրանքն է առաջարկվում՝ RS-R1 թե՞ RS-R3 տեսակը, քանի որ RS-R1 տեսակը չի համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ առաջարկված լոաածայնային ազդարարը հասցեական չէ, այնինչ պետք է առաջարկվեր և նշվեր RS-R3 տեսակը և հասցեական լոաածայնային ազդարար:
- 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար մասնակիցը առաջարկել է «Пожтехника» ընկերության արտադրության МГПХ-150-40-33-ЭМ/Р և МГПХ-150-100-33-ЭМ/Р (Иней) համակարգեր և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) հրամարիչ նյութի անվանումը նշել է «3M TM Novec-1230 կամ համարժեք», սակայն հանձնաժողովը տեղեկացել է, որ նշված ընկերությունը օգտագործում է այլ հրամարիչ նյութ, որը համարժեք չէ հրավերով պահանջվող 3M TM Novec-1230 նյութին, բայց եթե այնուամենայնիվ առաջարկվող համակարգը լիցքավորվելու է 3M TM Novec-1230 նյութով կամ դրան համարժեք նյութով, ապա պետք է նշվի կոնկրետ նյութի անվանումը առանց «կամ համարժեք» բառերի:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.07.2020-ին Մասնակցին ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում:

Հանձնաժողովի 03.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար:

Մասնակցի կողմից el@sec.am էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի համապատասխան hayk.khachatryan@president.am էլեկտրոնային փոստի հասցեին 02.07.2020թ.-ին ուղարկվել է շտկված թիվ 1.1 հավելվածը, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 22.06.2020թ.-ին տրված թիվ 430 վճարման հանձնարարականը և սերտիֆիկատը:

Բողոքներ քննող անձին hayk.khachatryan@president.am էլեկտրոնային փոստի հասցեից ստացված հաղորդագրության համաձայն՝ *«Առցանց հետևել եմ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/174 ընթացակարգի քննության վերաբերյալ 23.07.2020թ.-ի ժամը 15:00-ին կայացած առաջին նիստին և, հաշվի առնելով «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի ներկայացուցչի պնդումը, որ փաստաթղթերը ուղարկվել է իմ էլեկտրոնային փոստի հասցեին, դիմել եմ Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին՝ խնդրելով պարզել այդ հանգամանքը: Պարզվել է, որ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեից 02.07.2020թ.-ի ժամը 16:53-ին նամակ է ուղարկվել hayk.khachatryan@president.am էլեկտրոնային հասցեին, որը սակայն սերվերի հակավիրուսային ծրագրի կողմից արգելափակվել է, իսկ կից ֆայլերը ջնջվել:»:*

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից 01.07.2020թ.-ին տեղի ունեցած նիստի ժամանակ Մասնակցի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչը շտկելու համար Հանձնաժողովի քարտուղարի կողմից «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին նույն օրն ուղարկվել է ծանուցում: «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն իր՝ el@sec.am էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի համապատասխան hayk.khachatryan@president.am էլեկտրոնային փոստի հասցեին 02.07.2020թ.-ին ուղարկել է շտկված անհամապատասխանությունները, ինչը նաև հավաստվում է Բողոքներ քննող անձի էլեկտրոնային փոստի հասցեին՝ hayk.khachatryan@president.am էլեկտրոնային փոստի հասցեից ստացված հաղորդագրությամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/174 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**